տեղերից քերում են և անպակաս է ալիւրը քաղաքում, այնու ամենայնիւ ալիւրի գինը ամենևին չէ պակասում 3 ր. 60 կոպէկից պուդը։ Այս տարի հէնց գարնան սկզբից մսոպակայ գիւղերից շատ մուրացկաններ թափվեցին քաղաքում։ Քաղաքի աղքատներն էլ խառնվելով սրանց հետ բազմապատկեցին նոցա թիւը։ Այս մուրացկանների մի մասն էլ կազմում են Ցանկա-Հայաստանից եկած թշուառ սովատանջները։ Այս վերջինների մէջ կան քիւրդ, զպսի և ասորի մուրացկաններ էլ։ Ինչ և իցէ մեր քաղաքի փողոցները բաւականին բազմամարդ են դարձել մուրացկաններով։»

—

Նոյն տեղից մեզ գրում են. «Ցեղոյս «Ատուտածածին» փայտածածկ եկեղեցին բոլորովին հնացած լինելով, մօտ օրերումս քանդելին և չուտով կը սկսեն չինել մինոյն տեղում նոր եկեղեցի։ Շատ ցանկալի է պ. պ. հոգաբարձուների դիտաւորութիւնը։ Եթէ մի երկու տարի էլ յետաձգվեր այս չինութիւնը, եկեղեցու ծածքը անչուշտ մի օր փուլ կը գար ժողովրդի գլխին, ուստի մեր դարձեալ չինութիւնը նոյնպէս առաջ է գնում յաջող կերպիւ։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Կ. Պոլսից «Polit. Corresp.» լրագրին գրում են յունիսի 15-ից։

Այս շաբաթվայ նշանաւոր անցքը այն էր, որ շաբաթ օր, յունիսի 12-ին, դեսպանները յանձնեցին Բ. Դրանը իրանց ընդհանուր գրութիւնը։ Նա վերջնականապէս խմբագրվեցաւ յունիսի 10-ին դեսպանների խորհուրդի ժամանակ։ Դրութիւնը յանձնելու օրը դեսպանները պէտք է այցելէին Նորընտիր մինիստրներին։ Այդ պաշտօնական այցելութիւնից յետոյ արտաքին գործերի մինիստր Արեդդին-փաշային ներկայացան դեսպանների թարգմանները։ Ցանձնված գրութիւնը վեց օրինակ է և մի և նոյն բովանդակութիւնն ունի։ Դրութեան օրինակների յանձնելու ժամանակ բոլոր թարգմանները յայտնեցին, որ եթէ նրանց մէջ որ և է զանազանութիւն լինի, դա արտագրողի մեղաւորութիւնը կը լինի, որովհետև դեսպանների նշանակների համեմատ բոլոր վեց օրինակները միանման պէտք է լինեն։ Թարգմանների և դեսպանների վրա Արեդդին-փաշա լաւ տպաւորութիւն չը գործեց։

Դրութեան վեց օրինակների յանձնելը նրան շփոթեցրեց։ Իրրև մինիստր Արեդդին-փաշա անտարբեր է և ծանօթ չէ իր բաժնի կարգերի և աւանդութիւնների հետ։ Առաջ են, որ նրա ընկեր կը նշանակվի ազգով Հայ Արտին-Դադեան։ Նորընտիր ստացված տեղեկութիւնների համեմատ այդ նշանակութիւնը արդէն կայացել է։) Արտին-Դադեան Մահմուդ-Նեդիմ-փաշայի ժամանակ մինիստրի օգնականի պաշտօն էր վարում եմինչև այժմ նրա հովանաւորութեան տակ է։ Արեդդին-փաշա, որ սուլթանի կամքով է մինիստր նշանվաց, բոլորովին համապատասխանում է զորձերի այժմեան դրութեանը։ Իրրև արտաքին գործերի մինիստր նա պարտաւոր է Արքանիայի ամբողջութիւնը պաշտպանել Յունաստանի, մինչև անգամ Եւրոպայի դէմ և գործադրել իր բոլոր ազդեցութիւնը այրանցիների վրա, որպէս զի նրանք ուրիշ տեղ օգնութիւն չը փնտռեն և օտարազգի իշխան չընտրեն։ Այս յանձնարարութիւնը նրանից լաւ ոչ ոք չէ կարող կատարել։ Դեսպանները Բ. Դրանը 20 օր ժամանակ են տուել իրանց գրութիւնը պատասխանելու համար, հաւանական է, որ պատասխանը այդ ժամանակամիջոցից աւելի շուտ կը տրվի։ Դարձանելեան Նեդուցը մի քանի հարիւր թնդանոթաձիգներ են ուղարկված և թիւրք լրագիրները հասկացրին, որ այդ կարգադրութիւնը օտար նաւատորմիղների ընդդիմանալու նպատակով է արված։ Մի և նոյն ժամանակ Կ. Պոլի զօրքերի թիւը շատացրած է 55,000 ամենալաւ և փորձված զօրքերով։ Նրանցից շատերը ալբանցիներ են։

—

ԹԻՒՐՔԻԱ

—

Բոլոր եւրոպական լրագիրները շարունակում են խօսել եւրոպական պետութիւններից Բ. Դրանը ներկայացրած համաձայն գրութեան մասին։ Խօսվում հայոց խնդրի մասին, Ֆրանսիական «Temps» լրագիրը ասում է. «Հայոց խնդիրը յարուցանելով, մենք մանում ենք այն գժուարութիւնների սիրտը, որոնք ընդհանուր կապ ունեն Թիւրքիայի դրութեան հետ։ Թէև հայերի թշուառութիւնը սաստկացած է քիւրդերի բռնութիւններով, բայց նրանց դրութիւնը բարւոքելու համար պահանջվող կառավարական ձեռ, չէ զանազանվում այն քաղաքական պայմաններից, որոնց անհրաժեշտ կը լինէր իրագործել Թրակիայում, Մակեդոնիայում, Թէսալիայում և Կրէտում։ Ոչ մի տեղ Թիւրքիայում կեանքը և կայքը ապահոված չէ կամայականութիւնից։ Առհասարակ երեք բան է հարկաւոր Թիւրքիայի բոլոր նահանգներում. ժանդարմների զօրք, կարգը պահպանելու համար, դատարաններ, արդարադատութիւն տեսնելու համար և կանոնաւոր հարկահանութիւն եղած կամայականութեան տեղ։ Բայց այդ բոլոր վերանորոգութիւնները կարող են իրաւ գործվել երբ իրականութիւն կը ստանան գաւառական լուսաւորված ինքնավարութիւններ։ Իսկ այս վերջինը միաք չունի առանց կենտրոնական իշխանութեան, գահի պատասխանատուութեան, փոխանակ մինչև այժմ տիրապետող կամայականութեան և բռնաւորութեան։ Մենք դեռ չենք խօսում այն բանի վրա, որ ամբողջ ֆինանսական սիստեմը պէտք է վերանորոգվի, պէտք է աշխատել բարձրացնել Թիւրքիայի ֆինանսական դրութիւնը եւրոպական կապիտալների միջոցով։»

«Էյմտերի ընկերութեանը» հեռագրում են Կ. Պոլսից հետևեալը. «Օտար պետութիւնների դեսպանները խորհուրդ ունեցան, որի ժամանակ վճռվեցաւ չը պատասխանել Բ. Դրան հաղորդութեանը Թիւրք-յունական սահմանների վերաբերութեամբ այն հիման վրա, որ այդ հարցը Բերլինի կոնֆերենցիան պիտի վճռի։ Բ. Դուռը այժմ զբաղված է պատասխան պատրաստելով պետութիւնների միասնի գրութեան այն մասին, որ վերաբերվում է Զերնագորիայի և Հայաստանի հարցերին։ Կարծում են, որ Բ. Դրան արած առաջարկութիւնը այդ հարցերի վերաբերութեամբ բաւականացուցիչ բնաւորութիւն կունենան։»

—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսից հաղորդում են լրագիրներին, որ ոստեղ լուրեր են ստացված Հայաստանից, որ քիւրդերը նորից բռնութիւններ են գործում հայ ժողովրդի վրա, բայց տեղական կառավարութիւնը անհոգ է այդ մասին և չէ զսպում հարստահարող քիւրդերին։

—Կ. Պոլսից հաղորդում են, որ յունիսի 15-ին Դիարբէքիրի մէջ թէ հայ և թէ մահմեդական սոված ժողովուրդը 3000 թուով, յարձակվեցաւ հացի պետական ամբարների վրա և ոչնչացրեց այդ պահեստները։ Զօրքը վերականգնեցրեց կարգը և քսանի չափ մարդիկ սպանվեցան։

—Ցարութիւն բէյ Դադեան նշանակված է թիւրքաց արտաքին գործերի մինիստրի օգնական։ Վերջին ժամանակները նա շատ էր աշխատում սերտ յարաբերութիւններ հաստատել թիւրք մինիստրութեան և Դուշէնի մէջ։ Հայ լինելով Ցարութիւն Դադեան իրան նպատակ է դրել նուիրվել Հայաստանի բէֆորմների խնդրին։

—«Temps» լրագրում կարդում ենք, որ յունիսի 7-ին ֆրանսիական պատգամաւորների ժողովի մէջ Լուի Լեդրան պատգամաւորը խնդիր յարուցեց ֆրանսիական քաղաքականութեան մասին արեւելքում։ Նա ասեց, որ ֆրանսիան մինչև այժմ սխալ քաղաքականութեան էր հետեւում պաշտպանելով արեւելքում մրցակից հայ-կաթոլիկների առանց ուշադրութեան թողնելով հայ-գրիգորեաններին։ Լեդրանի կարծիքով ֆրանսիան անխորտ պէտք է պաշտպանի բոլոր դաւանութիւնների հայերին։ «Temps» լրագիրը համակրում է այդ մտքին, և հնարաւոր է զտնում այդ տեսակ պաշտպանութիւն Հայաստանի վերաբերութեամբ, սակայն Սիրիայի վերաբերութեամբ անհնարին է զտնում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յունիսի։ Թագաժառանգուհուն տուած է հետեւեալ Բարձրագոյն հրովարտակը. Զերդ Կայսերական Բարձրութիւն, 1876 թուին հրատարակված 155, 299, 300, 301, 303 և 176 յօդուածների հիման վրա հաստատված է շքանշանների կանոնագրութիւն։ Ասուածոյ կամքով վախճանված մեր սիրելի ամուսին Կայսերուհի Մարիա Սկէքսանդրովնայի մահից յետոյ բազմաշրջան սուրբ Եկատերինայի շքանշանների և նրանց մասին հրովարտակների ընծայելը Ձեր Կայսերական Բարձրութեանն ենք յանձնում։ Կարմիր խաչի շքանշանների և նրանց մասին հրովարտակների բաժանելը Մեր Թոյլտուութեամբ այդ նշանի մասին 1878 թ. փետրվարի հրատարակված կանոնագրութեան հիման վրա նոյնպէս յանձնում ենք Ձեր Կայսերական Բարձրութեանը։ Իսկականի վրա Նորին Մեծութիւն Կայսրի սեփական ձեռքով գրված է Ալէքսանդր։

ՓԱՐԻԶ, 17 յունիսի։ Կոնֆերանսներին կատարեալ ներում չնորհելու օրէնքի նախագծի վիճակը վերջնականապէս ապահովված չէ։ Թէ սենատի բրիւռների և թէ նրանց ընտրած մասնաժողովների կազմակերպութիւնը այնպէս է, որ այդ օրէնքի ընդունելը կասկածաւոր է երևում։ Միաբանութիւնները կառավարութենից դեռ ևս հրամաններ չեն ստացել։ Այնու ամենայնիւ նրանք իրանց հիմնարկութիւնները դատարկելու համար անհրաժեշտ պատրաստութիւնները արել են, թէպէտ վճռած է այնքան ընդդիմանալ, որ կարողանան զանազանվել պոլիցիայի կողմից իրանց ընկերակիցների վրա ուժով յարձակվելու վրա։ Եզուիտների միաբանութեան ռուս անդամներից հայր Դաքարին ուղևորվեցաւ. նվէ լյարիա, Ֆլորիդ Բուալիա։ Այս վերջինը մեր դեսպանատան միջոցով դիմեց կոմս Լորիս-Մելիքովին, խնդրելով թոյլ տալ իրան այցելել Ռուսաստան։ Հայր Մարտինով դեռ մնում է Փարիզում rue des sevres փողոցում գտնված եզուիտական տանը։ «ГОЛОСЪ» լրագրի թղթակիցը գրում է։ Իսկոյն ես ներկայ էի rue des sevres փողոցի վրա եղած եզուիտների եկեղեցու մէջ պատարագին. Ժողովուրդ չափազանց շատ կար։ Ներկայ եղողների թուում ես նկատեցի մարշալ Մակ-Մահոնին, դուքս Բրոլիին, Բիւֆէին և յեսատիմութեան միւս առաջնորդներին։ Պատարագի ժամանակ եղած ընդհանուր տրամադրութիւնը վկայում էր, որ եզուիտների մէջ մեծ շփոթ է տիրում։ Իմ բոլոր ծանօթներից ամենից լաւ իրան պահում էր հայր Մարտինով։ Նա նոյն փիլիսոփայական կենտրոնացած հայեացքը և նոյն բարի ժպիտն ունէր։ Եզուիտների աքսորելուն այսօր ամբողջ օր սպասում էին, առաւօտեան ժամ 4-ից մինչև երեկոյ։ Պէտք է աւելացնել, որ դատարանների հրաժարական տուող անդամների, մանաւանդ պրօկուրորների թիւը հետզհետէ աւելանում է։

ԲԵՐԼԻՆ, 17 յունիսի։ Կոնֆերենցիայի երեկվայ նիստի ժամանակ 'ի նկատի առնվեցաւ, որ նրա աշխատանքները զրեթէ վերջանում են և մնացեալ նիստերի խիստ գաղտնապահութիւնը թեթևացնել։ Մինչև անգամ օրերումս սպասվում է թիւրք-յունական նոր սահմանների քարտէզի հրատարակելը։ Կոնֆերենցիան հրաժարվեցաւ Ստիլսարաւանդից սահման անցկացնել այն նպատակով, որ յոյների և ալբանցիների մէջ արիւնահեղ կռիւներ չը պատահեն։ Սարերի միջով սահմանները անցկացնելու ժամանակ կոնֆերենցիան ի նկատի առաւ սարատեղյուսպայմանները և հրաժարվեցաւ այնպիսի սահման որոշել, որ պատերազմական կէտից նայելով, մի կողմին միւսի վրա առաւելութիւն չը տար։ Առաջ են որ երկրորդական հարցերի վերաբերեալ կարգադրութիւնները կոնֆերենցիայի պաշտօնական վճռի մէջ չեն մտնի։ Այդ կարգադրութիւնները առանձնապէս կը հաղորդեն յունաց և թիւրքաց կառավարութիւններին, որովհետև Բերլինի դաշնագրի 24-դ յօդուածի վրա հիմնված կոնֆերենցիայի իրաւունքները վերաբերում են միայն սահմանները որոշելու հարցին։ Տեղական տեխնիկական մասնաժողովի և կոնֆերենցիայի վճիռները Կ. Պոլիս և Աթէնք հաղորդելու ձեւի մասին կոնֆերենցիան երևի ոչինչ վճիռ չի տայ։ Այդ երկու հարցերն էլ պետութիւնները անմիջապէս իրանց մէջ կը վճռեն։ Բալգարական կառավարութիւնը հաղորդեց Աւստրօ-ունգարական մինիստրութեանը, որ բացի այն տրոյնոներից, որոնց մէջ զինուորական նիշեր են պահում, միւսները անպակաս կը քանդվին։ Աւստրօ-ունգարական կառավարութեան կողմից Բումինիային տուած հարցին Արաբ-տարիայի մասին Բումինիական կառավարութիւնը պատասխանել է, որ Բալգարիային երկրի մի կողմի զիջելը և Սիլիստրիայի մօտ կամարջի կառուցանելը երեւակայական է դարձնում, բայց այնու ամենայնիւ Բումինիան կրաւորականապէս կենտարվի Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների վճռին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յունիսի։ Այսօր ուղեւորվում է Կրոնշտատից կամաւոր կրէյսեր Ռուսաստան։ Նա տանում է իր հետ զինուորական և Կարմիր խաչին պատկանող առարկաներ և Վլադիվոստոկ ուղարկվող միւս կրող երկու նաւեր։ Կրէյսերի վրա կան 76 առաջին և երկրորդ կարգի և 1200 երրորդ կարգի ճանապարհորդներ։ Ռուսաստան կրէյսերը բարձրացրեց զինուորական դրոշակը։ Նա կը մտնի Գապայ իր Ոգոստոս փառ Հովանաւոր ծովային մինիստրութեան կառավարչին բարեւելու։ Մեծ ռվիանոսի զինուորական նաւերի հրամանատար Լէսօվսկի յունիսի 25-ից յետոյ կուղևորվի Ոգէսսա, Կ. Պոլիս, Կայրո և այնտեղ կը նստի Եւրոպա կրէյսերի վրա, որ չէնական ջրերն է գնում։

ՓԱՐԻԶ, 18 յունիսի։ Փարիզում և նահանգներում եզուիտները ամեն տեղ թողին իրանց հիմնարկութիւնները, յայտնելով, որ նրանք այժմ են հեռանգվում։ Մեծ անկարգութիւններ չը կային։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յունիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 62 կ., երկրորդ 92 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր. 75 կ., երկրորդ 224 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 92 ր., երկրորդ 91 ր. 75 կ., երրորդ 91 ր. 34 կ.։ Ռուսաց 1 բուլի Լոնդոնի վրա արժէ 25,59 պէնս, ռուսաց 100 բուլի Համբուրգի վրա 219 մարկ, Փարիզի վրա 269 ֆր.։ Բրոսպի տրամադրութիւնը հանգիստ է։

—

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ